

ՍԱՄՍՈՆ

ՅԱՅԱՍԱՆԻ

ԱՆԴՐԱՆԻԿ ԴԵՍՊԱՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

V

ԷՆՉԵԼԻԻՑ ԹԵՀՀՐԱՆ

Էնդելիի հայկական դպրոցը շքեղ զարդարանքի մէջ էր : Բնդհանուր արդ ու զարդի մէջ փայլում էին հայկական եւ պարսկական դրօշները, կողք կողքի : Խոնւած բազմութիւնը, անվերջ «կեցցէ»-ներով ու ծափերով իր գեսապանին առաջնորդեց սրահը, ուր քառաձայն խումբը երաժշտագէտ Անտոն Մայիլեանի ղեկավարութեամբ երգեց Յ . Մովսէսեանի յաւուր պատշաճի յօրինած ձօնը, որ ձայնադրել էր ինքը՝ չնորհալի երաժշտագէտը : Ապա իշխանը յուզւած՝ հաղորդեց ներկաներին Հայաստանի Հանրապետութեան ողջոյնները : Հայաստանի Հանրապետութիւնն... Սրահը թնդաց «կեցցէ»-ներից ու որոտալից ծափերից : Ժողովրդի ողեւորութիւնը անսահման էր : Շատերը հեկեկում էին ուրախութիւնից :

Այնուհետև դեսպանը մի ամփոփ ճառով, տեղեկութիւններ տըւեց Հայաստանի վիճակի, ժողովրդի աստիճանական բարոքման եւ պարսկահայերի կատարելիք գերի ու պարտականութիւնների մասին : Ճառը ընհատում էր «կեցցէ» Հայաստանը» բացագանչութիւններով եւ ծափերով :

Նոյն օրը երեկոյեան դեսպանը ընդունեց պաշտօնական այցելուներին : Եկան ողջունելու դատաւորը, քարդուղարը, ոստիկանապետը եւ մի շարք պաշտօնեաներ, որոնց յաջորդ օր՝ Իշխանը գնաց փոխայցելութեան :

Պարսկաստանի բոլոր հայաբնակ վայրերից ստացւեցին բազմաթիւ հեռագիրներ, ազգային մարմիններից եւ անհատներից, որոնք ցնծութեամբ բարի գալուստ էին մաղթում իրենց ազատագրւած հայրենիքի անդրանիկ գեսապանին :

Հետեւեալ երեկոյեան, Հայկական Ակումբի պերճօրէն զարդար-

ւած սրահում, տեղի ունեցաւ հացկերոյթ ի պատիւ հիւրի: Ներկայ էր խուռն բազմութիւն, որի մէջ՝ հոգաբարձական կազմը, ընդունող յանձնախմբի անդամները, Հ. Յ. Դաշնակցութեան եւ Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան ներկայացուցիչները, Հայ Կանանց Ընկերութիւնը, Ծնողական Խորհուրդը, Երիտասարդաց Միութիւնը եւ ուրիշներ. այլ եւ դատաւորը, քարդուղարը, անդիշական քաղաքական պահաժամկետը, քաղաքային բժիշկը եւ ուրիշ պաշտօնական անձեր:

Հացկերոյթը սկսւեց քառաձայն երդեցիկ խմբի երդով՝ «Մեր Հայրենիք» եւ պարսկական ազգային երդը, որից յետոյ Ի. Բէղիսանեանը հայ գաղութի եւ Գր. Եղիազարեանը ընդունող յանձնախմբի կողմից ասեցին ողջոյնի ոգեւորւած խօսքեր: Ապա Իշխանի առաջարկութեամբ խմւեց պարսիկ կառավարութեան կենացը, իսկ դատաւորը բաժակ բարձրացրեց ի պատիւ Հայաստանի կառավարութեան: Յետոյ, իրար յետեւից յուզւած ճառեր խօսեցին Հ. Յ. Դաշնակցութեան կողմից՝ Ի. Բէղիսանեանը, Գ. Եղիազարեանը եւ Ս. Յովսէփիկեանը, Ա. Դ. Հնչակեան կուսակցութեան ներկայացուցիչը եւ շատ ուրիշ հանդիսականներ: Բոլոր ճառերի միտքը նոյնն էր. անսահման հրճւանք Հայաստանի Հանրապետութեան ստեղծման առթիւ եւ սրտադին համակրանք՝ նրա դեսպանին:

Հացկերոյթը տեւեց մինչեւ գիշերւայ ժամը 2-ը: Միւս օր ժամը 1-ին գեսպանը հանդիսաւոր զնացքով մեկնեց Ռաշտ, որտեղից հայ համայնքը իրեւ ներկայացուցիչ ուղարկել էր Ս. Ղազարեանին: Ռաշտում էլ սպասում էին անհամբեր եւ պատրաստութիւններ էին տեսել ընդունելութիւնը կատարեալ դարձնելու համար: Եւ, յիրաւի, այստեղ էլ շատ չեղ ընդունելութիւն ցոյց տրեց: Հայոց դպրոցը պճնաւած էր ընտիր գորգերով, ծաղիկներով ու դալար կանաչով: Զոյդ գրօշակները ծածանւում էին սմէն կողմ: Ընդարձակ սրահի պատերին կախւած էին աղդային գործիչների պատկերները: Ընդունելութեան տեղ էր պատրաստւած եւ քաղաքից գուրս, Շալքու այգում, ուր ժամանակից առաջ հաւաքւել էին կառավարութեան ներկայացուցիչները, ազգային մարմինները եւ երկսեռ խուռն բազմութիւն: Հ. Յ. Դաշնակցութեան ներկայացուցիչները գնացել էին աւելի առաջ: Նրանց կողմից Հ. Յ. Գիլանի կոմիտէի անդամ Ալ. Խաչատրեանը բարի գալուստի ուղերձ արտասանեց եւ մի ճոխ ծաղկեփունջ մատուցեց Տիկ. Սաթենիկին:

Ծովածաւալ բազմութեան ողեւորութիւնը անօրինակ էր, երբ դեսպանը իր շքախմբով կանգ առաւ Շալքու այգու առջեւ: «Կեցչէ»-ները թնդացրին օդը: Լարաւոր նախակիումքը հնչեցնում էր «Մեր

Հայրենիք»-ը : Ամէն կողմից ծաղկեփնջերի տեղատարափ . Իշխանի անցած ճամբան ծածկւում էր ծաղիկների գեղեցիկ դորգով : Բոլորի աչքերից արցունք էր երեւում :

Փոքրիկ դադարից եւ պաշտօնական տեսակցութիւններից յետոյ , 41 կառքերից բաղկացած չքերթը դիմեց դէպի քաղաք : Պաշտօնական ընդունելութիւնը տեղի ունեցաւ դպրոցում , որի մուտքից մինչեւ սրահը շարւած էին տօնական զգեստներ հագած աշակերտ աշակերտուհիները իրենց ուսուցչական կազմով : Սրահը մտնելիս՝ նւազախումբը նւազեց երկու երկրների աղդային երգերը : Ապա , սրահում , ողջոյնի խօսք ասաց նահանգապետի ներկայացուցիչը , որին պատասխանեց իշխանը : Քաղաքի հայ համայնքի կողմից խօսեց թժ . իս . Տէրաէրեանը : Խօսք առին եւ մի շարք ուրիշ ներկայացուցիչներ , որոնց բոլորին պատասխանեց դեսպանը :

Հանդէսը վերջացաւ հիւրասիրութեամբ եւ մտերիմ զրոյցով , որից յետոյ իշխանը իր չքախմբով առաջնորդւեց վաճառական Սարդիս Զարիֆեանի տունը , ուր այցելութեան եկաւ նահանգապետ Ազրին :

Հետեւեալ օրը , դեկտ . 27-ի առաւութեան , այցելութեան եկան քարգուղարը , ոստիկանապետը , մէարէֆի բէխուը եւ կառավարական ուրիշ հիմնարկութեանց ներկայացուցիչներ : Իշխանը իր հերթին փոխայցելութիւն տևեց բոլորին : Մէարէֆի բէխուը առաջնորդեց նըրան պետական դպրոցը , ուր ուսուցիչները եւ աշակերտները ընդունեցին մեծարանքով : Իշխանը այցելեց եւ հայկական դպրոցը , ուր ջերմ ընդունելութեան արժանացաւ : Աշակերտական քառաձայն խումբը պ . Միքէեանի զեկավարութեամբ երգեց աղդային եւ ժողովրդական երգեր : Տեղի ունեցաւ մտերիմ զրոյց ուսուցիչների հետ :

Յաջորդ օրը , դեկտ . 28-ին , դպրոցի հոգաբարձութիւնը եւ ուսուցչական կազմը հանդէս-երեկոյթ ունեցաւ ի պատիւ Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցչի , որ տեւեց մինչեւ կէս գիշեր , որից յետոյ , մինչեւ առ . ժամը 4-ը , տեղի ունեցաւ յատկապէս կադարձարած խնջոյք :

Մէկնումը Ռաշտից էլ եղաւ խանդալառ ու սրտաշարժ : Յաջորդ կայանը Ղաղւինն էր , ուր նոյնպէս պատրաստւած էր փառաւոր ընդունելութիւն : Աղդային մարմինները , հասարակութիւնը , վաճառականութիւնը , գաղթականութեան ներկայացուցիչները այդ առթիւ յատուկ խորհրդակցութիւն էին ունեցել , որի ժամանակ վաճառականներից մէկը խնդրեց իրեն թողնել ընդունելութեան ամբողջ ծախքը հոգալու պատիւը , որովհետեւ ինքը վաղուց , դեռ յեղափոխական շարժումների ժամանակ ուխտել էր հիւրընկալել Հայաստանի առա-

Ջին գեսպանին։ Մի ուրիշը յայտնեց, թէ ինքը կը հոգայ գեսպանի եւ չքախմբի ամբողջ ծախքը որքան որ նրանք մնալու լինեն Ղաղւինում։ Եղան նաեւ ուրիշ դիմումներ եւ առաջարկներ։ Խորհրդակցութիւնը աշխատեց բոլորին էլ, որքան հնար էր, բաւարարութիւն տալ։

Երբ Ռաշտից հասաւ անհամբեր սպասւող հեռագիրը, թէ՝ «Իշխանը ամսոյս 30-ին, կէս օրից յետոյ ժամը 3-ին, կը լինի Ղաղւինում», հայ համայնքին տիրեց անսահման ողեւորութիւն։ Մանաւանդ բարձր էր տրամադրութիւնը նրանց, ովքեր անձամբ ճանաչում էին իշխանին, զիտէին, թերեւս եւ մասնակցել էին նրա յեղափոխական գործունէութեան Թաւրիզում, Սալմասուում, Ռւրմիայում։ Հակառակ աննպաստ օդի եւ անհանգիստ քամու, ազգային մարմիններն ու մասնաւոր անհատներ կառքերով շտապում էին քաղաքից դուրս, Ռաշտի դուռը։ Այնտեղ խումբ-խումբ հաւաքում էր եւ երկսեռ բազմութիւնը։ Գաղթական երիտասարդութիւնը գալիս էր ձիերով, զինորական կարգավահութեամբ։

Մինչ բազմութիւնը խոնաւում էր որոշւած վայրում, երկու ինքնաշարժներ սլանում էին իշխանին ընդ առաջ։ Մէկի մէջ նստած էին հերելնկալող Աւետիս խան Տէր-Գրիգորեանը իր երկու զաւակների հետ, Հ. Յ. Դ. Աւրապատականի եւ Շահստանի կեդր. Կոմիտէների ներկայացուցիչը՝ տողերիս զրոյը եւ Ղաղւինի Հ. Յ. Դ. Կոմիտէի ներկայացուցիչ Ղահր. Թամրազեանը։ Միւսում կային Եղբ. Թումանեանների առեւտրական տան կողմից Միրզա Ամիրջանեանը, Հնչակեան Ռաֆ. Մովսէսեանը եւ Ղաղւինի հայ հասարակութեանը։

Հանդիպումը տեղի ունեցաւ քաղաքից մօտ 20 կիլոմետր հեռու Աղա-Բարա կոչւած վայրում։ Իշխանի ինքնաշարժը փչացել էր, այդ պատճառով ուշացել էին՝ անհանգստութիւն պատճառելով սպասողներին։ Յուղած զրկախսաննեցինք եւ համբուրեցինք իշխանի եւ իշխանուհու հետ։ Նոյն երւանդն էր՝ եւ նոյն Սաթենիկը՝ 95 - 96 թւականների Տաշօն եւ օր. Մաղիկը, միայն արդէն ծերացած։ Համբուրեցին եւ Ռ. Մովսէսեանի հետ, իբրև նախկին յեղափոխական ընկերներ։ Ներկայացան ու ծանօթացան եւ միւսները։

Շատ էին ուշացել. արդէն օրը մթնում էր։ Շքախմբի անդամները յետ էին մնացել. նրանց ինքնաշարժն էլ փչացել էր։ Սպասելու ապարդիւն էր։ Տեղաւորւեցինք մեր ինքնաշարժերում եւ ուղեւորւեցինք դէպի Ռաշտի դուռը, ուր բազմութիւնը վաղուց արդէն անհամբերութեան նշաններ էր ցոյց տալիս։ Կառավարութեան ներկայացուցիչները երկար եւ ապարդիւն սպասելուց յետոյ վերա-

դարձել էին : Ցըսի պատճառով ցըւել էր և հասարակութեան մի մասը :

Երեկոյեան ժամը վեցն էր , երբ գեսալանական ինքնաշարժը մօտեցաւ սպասողներին եւ վերջիններիս ուղեկցութեամբ զիմեց գէպի հայկական գպրոցը , ուր մուտքի առաջ եւ բակը ասեղ ձգելու տեղ չկար : Իշխանը անցաւ դրօշաղարդ փառաշուր կամարի տակից : Դըպրոցի դուրսն ու ներսը ծածկւած էին գորգերով , ծաղիկներով , կանաչով , դրօշակներով եւ աղբային գործիչների պատկերներով : Բակի մէկ ծայրից միւսը տարածւած էին դրօշաղարդ ծաղկահիւս շըթաներ եւ գոյնղոյն լավտերներ : Տեսարանը սքանչելի էր եւ տօնական տրամադրութիւն էր ներշնչում ամենքին :

Ուսոցչական եւ աշակերտական խումբը «Մեր Հայրենիք , աղա՛տ , անկախ»-ի գոռ հնչիւններով ընդունեց ցանկալի հիւրին : Իշխանը բարձրացաւ պատշգամբը եւ մի քանի հօսքով ընորհակալութիւն յայտնեց ցոյց տրւած ջերմ ընդունելութեան համար : Ի պատասխան՝ օդը թնդաց «կեցցէ»-ներից : Ժամանակը ուշ էր : Ծնկունելութեան հանդէսը յետաձգւեց յաջորդ օրւայ : Հիւրերը , ներկայացուցիչների ուղեկցութեամբ , մեկնեցին հիւրընկալ Ա . Տէր-Գրիգորեանի տունը :

Այսուղ դեսպանին ներկայացան աղքային մարմինների ներկայացուցիչները , քահանան , վաճառականները , Հ . Յ . Դաշնակցութեան եւ Ա . Դ . Հնչակեան կուսակցութեանց ներկայացուցիչները , որից յետոյ տեղի ունեցաւ զրոյց Հայստանի մասին : Եկաւ ոստիկանապետը եւ կառավարութեան կողմից բարի գալուստ մաղթելով՝ նահանդապետի ու քարգուղարի այցելութեան համար ժամադրութիւն ինդրեց : Օրը վերջացաւ ընթրիքով . մտերմական սեղանի շուրջ արտայատւեցին շատ ջերմ զգացումներ ու բարեմաղթութիւններ :

Հետեւեալ առաւօտ ես ընկերական երկար տեսակցութիւն ունեցայ իշխանի ու Սաթենիկի , մեր նախկին Երւանդի ու Ծաղիկի հետ : Իշխանը ինդրեց ծանօթացնել իրեն տեղական պայմաններին ու գործերին . նա առանձնապէս հետաքրքրում էր տիրող քաղաքական ու տնտեսական զրութեամբ , գաղթականների վիճակով , մեր կուսակցութեան եւ ընկերների կեանքով ու փոխարարերութիւններով , մասնաւորապէս Թէհրանի մեր կազմակերպութեան շարքերում առաջ եկած անհամաձայնութեամբ եւ պատակառումով : Հարց ու պատասխանի ձեւով ես պարզեցի նրան հետաքրքրող ինդիրները :

Երկար խօսելու ժամանակ չկար : Շուտով սկսեց պաշտօնական այցելութիւնների շարքը : Եկաւ նահանդապետը , ապա՝ քարգուղարը , ժամադրմների պետը , ոստիկանապետը : Մի ժամ տեւող սիրա-

լիր ու բարեկամական տեսակցութիւն։ Նրանց հեռանալուց յետոյ, եկաւ անդլիական քաղաքական եւ զինւորական ներկայացուցիչը «Թայմս»-ի թղթակցի հետ, որոնք բաւական երկար տեղեկութիւններ տոին Հայաստանի եւ Կովկասի մասին։

Նոյն օրը երեկոյեան, ժամը 4-ին, Իշխանը, ընկերակցութեամբ Ա. Տէր-Գրիգորեանի, Միքայէլ խան Բարխուդարեանի եւ Միրզա Ամիրջանեանի այցելեց կառավարութեան ներկայացուցիչներին, ապա, ինձ հետ, զնաց Պոլիտիկը Օֆիսի սպային, որի հետ զրոյց ունեցաւ գաղթականութեան ապագայի մասին։ Փոխայցելութիւն տեսք նաև Մ. խան Բարխուդարեանին եւ Մ. Ամիրջանեանին։ Իսկ երեկոյեան տեղի ունեցաւ հանդիսաւոր խնջոյք, որի ամբողջ ծախքը ստանձնել էր Միքայէլ խանը։ Իշխանը ընդունեց «Մեր Հայրենիք»-ով, որ նւազեց «Քնար» նւագախումբը, Համբ. Գրիգորեանի ղեկավարութեամբ։ Նահանգապետը, քարդուղարը եւ ոստիկանապետը՝ պարսկական ազգային երգով։

Խնջոյքը անցաւ բարձր տրամադրութեան տակ։ Երդ, նւագ, առաստ հիւրասիրութիւն, խանդավառ ճառեր։ Ողջոյնի ճառեր խօսեցին Համայնական վարչութեան, Կանանց կուլտուրական Միութեան, Հայ Գաղթականութեան, Հոգաբարձութեան, ուսուցչական խմբի, Հ. Յ. Դ. Ստրավաստականի եւ Շահստանի Կ. Կ.-ի ներկայացուցիչները։ Հ. Յ. տեղական կոմիտէի կողմից խօսեց Հ. Գրիգորեանը, Հայ զինւորների կողմից՝ Լեռն Դային, Երիտ. Յառաջդիմական Միութեան կողմից՝ Բագր. Յակոբեանը, ապա՝ հնչակեան Ռ. Մովսէսեանը, բոլցելիկ Հմայեակ Աւագեանը։ Բոլոր ճառերն էլ տողորւած էին բուռն Հայրենասիրութեամբ։ Ամենից վերջը խօսք առաւ Միք. խան Բարխուդարեանը, որը իրենց առեւտրական տան կողմից Հայաստանի անդրանիկ գեսապանի տրամադրութեան տակ գրեց 100,000 ռուբլի։ Նրան հետեւեց Ա. Տէր-Գրիգորեանը՝ նոյնպէս 100,000 ռուբլով։ Օրինակը վարակեց եւ ուրիշներին՝ կարճ ժամանակամիջոցում գոյացաւ 769,000 ռուբլի։

Այս սրտարութիւն հայրենասիրութեան զգացւած խօսքերով պատասխանեց Իշխանը, որի ճառը համակ ջատագովանք էր վերածնուղ Հայաստանի ու Հայ ժողովրդի ստեղծագործող հանճարի։ Նա ծանրացաւ պարսկահայոց պարտականութեան վրա հանդէպ հայրենիքի, երախտագիտառութիւն յայտնեց պարսիկ ժողովուրդին ու կառավարութեան եւ կոչ ուղղեց համերաշխ գործունելութեան յօդուա եւ ի փառ ստրկութեան կապանքներից պատաղբաւած Մայր Երկրի։

Իշխանի ճառը ընդհատում էր բուռն ծափերով եւ «կեցցէ»-ներով։ Խնջոյքը տեսեց մինչեւ երեկոյեան ժամը 10-ը, որից յետոյ հիւ-

րերը հրաւիրւեցին ընթրիքի Եղբ. Թումանեանների առեւտրական տան կողմից :

Յաջորդ օրը 1920 յունւարի 1-ն էր : Դադւինի հայ դադութը հոգեկան հրճանքով չնորհաւորում էր իր հայրենիքի դիւանագիտական ներկայացուցիչի նոր տարին : Խումբ - խումբ գալս էին աւցելուները՝ բարձր եւ զւարթ տրամադրութեան տակ : Բայց Է՞րը է հայը առանց արցունքի ուրախութիւն վայելել : Ընդհանուր ոգեւորութեան մէջ մէկ էլ մի հեռագիր եկաւ Իշխանին : Կարդաց, մռայլ սուեր իջաւ ճակատին : Ներկաները անհանգիստ նայում են նրան : Հեռագրի ընթերցումից յետոյ տիրեց մի պահ լուսութիւն, ապա -

- Ներսէս Սրբազնը Թաւրիզից հեռագրում է, թէ Վերին եւ Ներքին Ազուլիսները թալանւել ու կոտորւել էին թիւրքերի կողմից, թէ փախստականների ծայրը արդէն հասել է Թաւրիզ...

Ծանր ու ցնցող լուր : Ամենքը շշմել են անակնկալ աղէտից : Բընաջնջեց եւ կովկասի այս ամենագեղեցիկ, ամենէն հարուստ ու փարթամ անկիւնը, Գողթան թագն ու պսակը : Մանրամասնութիւններ չկային, բայց ուր գործում է թիւրք ճիւաղի բարբարոս ձեռքը՝ ի՞նչ մանրամասնութիւն :

Վրդովեցուցիչ լուրի տպաւորութեան տակ ամենքն էլ յուզում ու գայրոյթ էին արտայայտում : Ցաւ, որ Հայրենիքի անկախութիւնը մթագնում է նոր աղէտով : Վախ, որ բօթաբեր լուրը ստացւեց նոր տարւայ օրը : Լաւ չսկսեց նոր տարին : Եւ ցրւեցին բեկւած սրտով : Տէր Եղնիկ քահանան համարում էր լուրը չարագուշակ մեր հետապայ կեանքի համար :

Կէս օրից յետոյ, դեսպանը այցելեց գաղթականական դպրոցը եւ գիմանորւեց «Մեր Հայրենիք»-ով : Ուսուցիչ Գագիկ Ռշտունին ողջոյնի ուղերձ կարդաց եւ տեղեկութիւններ տւեց դպրոցի մասին : Իշխանը հետաքրքրւեց դպրոցի վիճակով եւ գոհ սրտով հետացաւ : Ապա այցելեց գաղթականների բնակարանները, ծանօթացաւ նրանց նիստ ու կացին : Հանդիպեց սալմաստեցի եւ ուրմեցի իր հին ծանօթներին, որոնց հետ ունեցաւ մտերիմ խօսակցութիւն : Դիտեց բուժարանը, գրասենեակը եւ մեկնեց գոհ գաղթականութեան վրա թափւած խնամքից :

Նոյ օրը երեկոյեան տեղի ունեցաւ տեսակցութիւն Հ. Յ. Դ. անդական կոմիտէի հետ Ղ. Թամրագեանի բնակարանում : Իշխանը տեղեկութիւններ տւեց Հայաստանի պետական ու կուսակցական կեանքի եւ խորհրդարանի ու կառավարութեան կատարած աշխատանքների, ինչպէս նաև Հ. Յ. Գ. բնդհ. ժողովի եւ կագմական կերպական ընթացիկ կեանքի մասին : Հետաքրքրւեց տեղական

լինդիրներով եւ բացատրեց Պարսկաստանի կազմակերպութեան անելիքները:

Միւս օրը, յունու. 2-ին, եկաւ Արսէն խան Միքայէլեանը՝ Թէհրանի հայ հասարակութեան կողմից Հայաստանի գեսականին բարի գալուստ մաղթելու համար եւ տեղեկանալով իշխանի մեկնելու ժամանակի մասին՝ վերադարձաւ: Երեկոյեան դպրոցի հոգաբարձութիւնը տւեց երաժշտական երեկոյի ի պատիւ իշխանի: Ներկայ էր երկսեռ խուռն բազմութիւն, ինչպէս եւ նահանգապետը, քարգուզարը եւ կառավարական այլ պաշտօնեաները: Իսկ երեկոյի իշխանի մինչեւ ուշ գիշեր, տեղի ունեցաւ հանդիսաւոր ընթրիք Ա. Տէր-Գլուխորեանի տանը:

Այստեղ յիշենք, որ ճիշտ այդ օրերին Թաւրիզից Ղազուն էին հասել Անդրանիկի խմբի նախկին զինուրներից 40 հողի, որ գնում էին Բակուրա իրենց ընտանիքները գանելու: Մարդկեալ բացարձակապէս զուրկ էին նիւթական միջոցներից: Անգլիացիներին ուղղւած դիմումները հանդիպեց չոր մերժումի: Խնդիրը ներկայացւեց իշխանին: Որքա՞ն եղաւ բոլորի ուրախութիւնը երբ նա յայտնեց, թէ Հայաստանի իննամատարութեան նախարարութիւնը Ատրպաստականի գաղթականներին յատկացրել է մէկ միլիոն սոսրի, որից 300 թուման կարող է տրամադրել յիշեալ 40 հոգուն, իսկ մինացեալը պիտի ուղարկէ ներսէս Արքեպ. Մելիք-Թանգեանին: Այդ գումարով 40 հոգին ճանապարհւեց Համազան: Վերջը պէտք եղաւ 150 թուման եւս հասցնել, որ հանին Բակուրա:

Հայաստանի գեսականի այս առաջին դրամական օգնութիւնը խոր տպաւութիւն գործեց մասնաւորապէս գաղթականների վրա, որոնք առանձին հպարտութեամբ առում էին, թէ՝ այլեւս անտէր չեն: Կայ հոգատար ազգային մի կառավարութիւն, որ կը մտածէ նրանց մասին: Այսպէս է աշխարհը. «Տէրովին Տէրն է պահել, անտէրին դէլն է տարել»:

Յունաւար Յ.-ի կէս օրին, Իշխանը, Եղբ. Թումաննեանների առեւտրական տան տրամադրած երկու ինքնաշարժով մեկնեց Թէհրան: Բաժանումը շատ սրտառուէ էր: Ահազին բազմութիւն էր հաւաքւել Թէհրանի գուռը, Ղազունից երեք վերստ հեռու, անօրինակ խանդավառութեամբ ճանապարհ զրեց իր սիրելի Հայրենիքի անդրանիկ գեսականին:

Թաւրիզ.

(Շարումակիլի)

